ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ <<ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ՍՊ-ՊԸԾՁԲ-16/05>>

209-2016

ք. Երևան <<24>> սեպտեմբերի 2016թ.

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ. Էլոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Իմպերիում>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Ադյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն>> մրցույթի անցկացման ծառայությունների ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 3 620 000 (երեք միլիոն վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2016 թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 , N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	<<Իմպերիում>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Աբովյան 9	Հասցե՝ ք.Երևան, Արաբկիր, Ա.Ավետիսյան 112 7
ՀՎՀՀ 02586282	ՀՎՀՀ 00135548
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բանկ՝ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 900011009355	Հ/Հ 2050622060861001
Նախարարության ղեկավար՝	Տնօրեն՝
_____Վ. Էլոյան	_____Գ. Աղյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<<24>> սեպտեմբերի 2016 թ. կնքված
N ՍՊ-ՊԸԾՁԲ-16/05 ծածկագրով գնման պայմանագրի
2019-2016

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Նախագահի մրցանակի համար << Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն>> մրցույթի անցկացման ծառայություններ
ՀՀ Նախագահի մրցանակի համար «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթի անցկացման ծառայություններ <<Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն>> 2016 թվականի մրցույթի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բնակչության սոցիալական պաշտպանության երեխաների ընդհանուր տիպի, խնամքի և պաշտպանության հաստատությունների (այսուհետ՝ հաստատություն) շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացումը: **Խնդիրներն են՝** ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնարավորությունների օգտագործում երեխաների դաստիարակության և առողջության ամրապնդման գործընթացում. Մրցույթն անցկացվելու է երկու փուլով. Առաջին փուլի համար ծառայության մատուցման անհրաժեշտություն չկա : Երկրորդ՝ եզրափակիչ փուլ (հանրապետական)՝ 2016 թվականի սեպտեմբերի 29-ից 30-ը Երևան քաղաքում, որի անցկացման համար անմիջական պատասխանատվությունը կրում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության <<Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը : Մրցույթին մասնակցելու են Հայաստանի Հանրապետության 12 հաստատություններ: Մրցույթի անցկացման նախատեսված է՝ • Մարզադահլիճի վարձակալում Երևանի մարզաբազաներից մեկում («Դինամո» կամ «Միկա» կամ այլ նմանատիպ մարզաբազա), **(1 օր)** • Ռադիոհանգույցի վարձակալում՝ բարձրախոս 7 կվ հզորությամբ, 2 բարձրախոս առանց լարի, 1-ը լարով, միկշերային վահանակ **(1 օր)** • Մրցավարների համար մարզահագուստ բամբակյա կտորից, ամառային շապիկ և գլխարկ, գույնը՝ սպիտակ (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով) **(24 հատ՝ 8-ական M, L, XL)** Մարզական միջոցառման ծրագիրն իր մեջ ներառում է՝ **Վարժություն 1** խաղային փոխանցավազք **Վարժություն N2** Փոխանցավազք արգելքների հաղթահարումով **Վարժություն N3** Փոխանցավազք մարմնամարզական օղակներով **Վարժություն N4** Հավաքի՛ր «Հաղթանակ» բառը **Վարժություն N5** Խաղային փոխանցավազք՝ **Վարժություն N6** Խաղային փոխանցավազք՝ թենիսի գնդակներով **որոնց համար անհրաժեշտ մարզագույքն է՝** • Վայրկյանաչափ էլեկտրոնային, պլաստմասսե հումքից մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան պլաստմասսե պատյանով.**(3 հատ)** • Բասկետբոլի գնդակ՝ կաշվե կամ փոխարինող հումքից, N 6 **(3 հատ)**

են՝
ՀՀ Նախագահի վկայագիր. չափսը՝ 30 x 20 սմ,
թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ (3հատ)

- Հավաստագիր. չափսը՝ 30 x 20 սմ, թղթե,
օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ
Տեքստը համաձայնեցնել նախարարության
աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ (36 հատ)

- Շնորհակալագիր. չափսը՝ 30 x 20 սմ, թղթե,
օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ
Տեքստը համաձայնեցնել նախարարության
աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ (9 հատ)

- Մեդալներ. չափսը՝ 5 սմ տրամագծով x 3 սմ
հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն
ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ
հումքից (36 հատ)
- Գավաթ (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված պատվիրակության համար)՝ 65 սմ, 60 սմ և 50 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե
պատվանդանով (3 հատ)

- Նվերներ. մարզահագուստ մասնակից բոլոր երեխաների համար՝ կիսասինթետիկ հումքից, վերնազգեստը կարմիր՝ եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով) (120 հատ՝ 60ական 9-10,11-12 տարեկան երեխաների համար)

1-ին տեղը գրաված հաստատությանը՝

- Գնդակ ֆուտբոլի , կաշվե կամ փոխարինող
հումքից (10 հատ)
- Գնդակ վոլեյբոլի կաշվե հումքից (10 հատ)
- Գնդակ բասկետբոլի, կաշվե կամ փոխարինող
հումքից, N 6 (10 հատ)
- Վոլեյբոլի ցանց (1 հատ)
- Սեղանի թենիսի ձեռնաթի (ռակետ)- պատրաստված
փայտից, երեսեպատված ռետին ծածկով (10 զույգ)
- Դարաշ՝ պատրաստված է խտացված բուսական
մազաթելերի, կամ խտացված բամբակից, թիրախը
բաժանված է հատվածների որոնց վրա գրանցված է
1-ից 20 թվեր, նետը պատրաստված է՝ ծայրամասը
մետաղե ասեղից և պլաստմասե իրանից (4 հատ)

- Ցատկապարաններ- Պարանը՝ ռետինե,
բռնիչները՝ պլաստմասսե, 2-2,5 մետր երկարությամբ,
իր տուփի մեջ, մրցումային և մարզումային
ստանդարտներին համապատասխան (10 հատ)
- Գուրզաներ բարձրությունը 30-40 սմ, կոնաձև, պլաստմասե հումքից (16 հատ)

- Բաթմինթոն - նյութը՝ գրաֆիտ-կարբոն, ցանցի գործվածքը՝ սինթետիկ թելից (6 զույգ)

- Պարան մագլցման- Բամբակի և կապրոնի համակցությունից, 6 սմ տրամագծով, 4.5-4.6 մ երկարությամբ, վերին մասում առաստաղին ամրացվող հարմարանքով, մարզումային ստանդարտներին համապատասխան (1 հատ)

2-րդ տեղը գրաված հաստատությանը՝

- Գնդակ ֆուտբոլի՝ կաշվե կամ փոխարինող հումքից, N 6 (**8 հատ)**

- Գնդակ վոլեյբոլի՝ կաշվե հումքից **(8 հատ)**
- Գնդակ բասկետբոլի՝ կաշվե կամ փոխարինող հումքից, N 6 **(8 հատ)**
- Վոլեյբոլի ցանց՝ ցանցի չափը 9.5x1 մ պոլիմերային կապրոնե ժապավեններից հյուսված **(1 հատ)**
- Սեղանի թենիսի ձեռնաթի (ռակետ)- պատրաստված փայտից, երեսեպատված ռետին ծածկով **10 զույգ**
- Դարթս՝ պատրաստված է խտացված բուսական մազաթելերի, կամ խտացված բամբակից, թիրախը բաժանված է հատվածների որոնց վրա գրանցված է 1-ից 20 թվեր, նետը պատրաստված է՝ ծայրամասը մետաղե ասեղից և պլաստմասե իրանից **(4 հատ)**
- Բաթմինթոն - նյութը՝ գրաֆիտ-կարբոն, ցանցի գործվածքը՝ սինթետիկ թելից **(4 զույգ)**

- Գուրզաներ - բարձրությունը 30-40 սմ, կոնաձև, պլաստմասե հումքից **(14 հատ)**

- Ցատկապարաններ- Պարանը՝ ռետինե, բռնիչները՝ պլաստմասսե, 2-2,5 մետր երկարությամբ, իր տուփի մեջ, մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան **(10 հատ)**

3-րդ տեղը գրաված հաստատությանը՝

- Գնդակ ֆուտբոլի, կաշվե կամ փոխարինող հումքից **(6 հատ)**
- Գնդակ վոլեյբոլի կաշվե հումքից **(6 հատ)**
- գնդակ բասկետբոլի, կաշվե կամ փոխարինող հումքից, N 6 **(6 հատ)**
- Վոլեյբոլի ցանց **(1 հատ)**
- Դարթս՝ պատրաստված է խտացված բուսական մազաթելերի, կամ խտացված բամբակից, թիրախը բաժանված է հատվածների որոնց վրա գրանցված է 1-ից 20 թվեր, նետը պատրաստված է՝ ծայրամասը մետաղե ասեղից և պլաստմասե իրանից **(4 հատ)**

Բաթմինթոն - նյութը՝ գրաֆիտ-կարբոն, ցանցի գործվածքը՝ սինթետիկ թելից **(4 զույգ)**

Գուրզաներ - բարձրությունը 30-40 սմ, կոնաձև, պլաստմասե հումքից **(14 հատ)**

-

- Ցատկապարաններ- Պարանը՝ ռետինե, բռնիչները՝ պլաստմասսե, 2-2,5 մետր երկարությամբ, իր տուփի մեջ, մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան **(10 հատ)**

Եզրափակիչ փուլում 4-12-րդ տեղերը

գրաված հաստատություններին մարզագույք՝ հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով.

- Գնդակ ֆուտբոլի՝ կաշվե կամ փոխարինող հումքից, N 6 **(18 հատ)**

- Գնդակ վոլեյբոլի՝ կաշվե հումքից **(18 հատ)**

հումքից, N 6 (**18 հատ**)

- Ցատկապարաններ- Պարանը՝ ռետինե, բռնիչները՝ պլաստմասսե, 2-2,5 մետր երկարությամբ, իր տուփի մեջ, մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան (**27 հատ**)

- Բաթմինթոն - նյութը՝ գրաֆիտ-կարբոն, ցանցի գործվածքը՝ սինթետիկ թելից (**18 զույգ**)

Մրցավարական հանձնաժողովի և մրցավարների աշխատանքները ապահովելու համար անհրաժեշտ գրենական պիտույքներն են՝

- Կաշվե թղթապանակ փափուկ կազմով և << զինանշանով, 35 սմ x 23 սմ չափսի (**3 հատ**)

- Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի թերթերի համար (**20 հատ**)

- Ֆայլ (թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորությամբ), 1 տուփ (**100 հատ**)

- Գունավոր ժապավեն սինթետիկ հումքից, գլանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ (տարբեր գույների) (**150 մետր**)

- Կպչուն ժապավեն (սկոչ) (**3 հատ**)

- Թղթե կպչուն ժապավեն՝ 48 մմ x 100 մ, տնտեսական, մեծ գլանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ (**3 հատ**)

- Թուղթ A4 չափսի 1 (21 x 29.7), չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ^2 (210 x 297) մմ (**2 հատ**)

- Թղթապանակ (ռեգիստրատոր)՝ 2 օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի (**10 հատ**)

Գրիչ գնդիկավոր. տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր (**10 հատ**)

-

- Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ (**10 հատ**)

• Ապակարիչ. գրասենյակային ապակարիչ՝ N 10 ասեղներով կարված թղթերը քանդելու համար (**1 հատ**) • Վերը նշված գույքը մրցավայր տեղափոխելու համար անհրաժեշտ են տրանսպորտային միջոցներ **(1 բեռնատար մեքենա)** • **Մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 15.07.2016թ. N 127-Ա/1 հրամանով նախատեսված ՀՀ Նախագահի մրցանակի համար « Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» 2016թվականի մրցույթի կանոնակարգի պահանջների համաձայն :** ***Պարտադիր պայման է ծառայության մատուցման համար անհրաժեշտ գույքի չօգտագործված լինելը** **** Եզրափակիչ փուլի համար անհրաժեշտ գույքը Կատարողը հասցնում է մրցավայր:**

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
29.09.2016թ.	30.09.2016թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Աբովյան 9
ՀՎՀՀ 02586282
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011009355

Աշխատակազմի ղեկավար՝

----------Վ. Էլոյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Իմպերիում>> ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Արաբկիր,
Ա.Ավետիսյան 112 7
ՀՎՀՀ 00135548
Բանկ՝ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2050622060861001

Տնօրեն՝

----------Գ. Ադյան

Կ.Տ.

Հավելված 2
<< 24 >> սեպտեմբերի 2016 թ. կնքված
N ՍՊ-ՊԸԾՁԲ-16/05 ծածկագրով գնման պայմանագրի
209 - 2016

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	ՀՀ Նախագահի մրցանակի համար «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթի անցկացման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	3620000	3620000	3620000	3620000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Աբովյան 9
ՀՎՀՀ 02586282
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011009355

Աշխատակազմի ղեկավար՝

----------Վ. Էլոյան

ԿԱՏԱՐՈՂ

<<Իմպերիում>> ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Արաբկիր, Ա.Ավետիսյան 112 7
ՀՎՀՀ 00135548
Բանկ՝ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2050622060861001

Տնօրեն՝

----------Գ. Ադյան

Կ.Տ.

Հավելված 3
«24» սեպտեմբերի 2016 թ. կնքված
N ՍՊ-ՊԸԾՁԲ-16/05 ծածկագրով գնման պայմանագրի
209-2016

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
Ստորագրություն	Ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

N ՍՊ-ՊԸԾՁԲ-16/05 ծածկագրով գնման պայմանագրի
209-2016

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն